

խառնակչութիւնով, կազմակերպչութիւնով և աշխատակցութիւնով: Սակայն ինչ որ ամէնէն սարսափելին է այս դարհուրելի դէպքերուն մէջ, իմ կարծիքով, վարուելու այն եղանակն է՝ որուն Հայերը ենթարկուեցան կոտորածներէն ետք, ինչպէս նաև այն դժոխային միջոցները՝ զորս գործադրեցին վերապրողները բնաջնջելու համար:

Զարդերէն վերջ Ատանայի մէջ դրեթէ Հայեր մը նոցած չէին: Մէկ մասը սպաննուած էր, միւսը յաջողած էր փախչիլ. մնացորդը ոչխարի հօտի մը նման գրուած էր քանի մը օտարկան-ղինուորներու հակազուսթեան տակ: Երբ քննութիւնը սկսաւ, մէկ կողմէ կը տեսնուէր մարդկային խեղճուկ քեկորներ՝ սիրելիներու ժարմիններուն վրայ թափուած արջունքներէն սպառած. միւս կողմէ՝ բոլոր գրգռիչները, սճիրներու կաղմակերպիչները, թալանիչները և մարդասպանները: Այս պայմաններուն տակ ի՞նչ բրած է տեղական կառավարութիւնը: Անիկա բանտարկեց վերապրողներուն մէջ աչքի բնկնող բոլոր անձերը և զանոնք չըզթայի զարկաւ՝ կառավարութեան դէմ ապստամբած և զինուորներուն վրայ զէնք պարպած ըլլալու ամբաստանութեամբ:

Այս տարօրինակ ընթացքը արդիւնքը ունեցաւ չգիտցողներուն ալ սովրեցնելու որ՝ կոտորածներու հեղինակը և կազմակերպիչը նոյնինքն տեղական կառավարութիւնն էր:

Երբէք չէ ուրացուած որ Հայերը զէնք գործածած են: Ոչ ոք ուզած է նոյնպէս ուրանալ որ զինուորներ և ուրիշ իսլամներ սպաննուած են Հայերու նետած գնտակներէն: Բայց խնդիր է գիտնալը թէ՛ նման պարագաներու տակ զէնքի գործածութիւնը կարելի՞ է պատժել: Ահա այն խնդիրը՝ զոր մինչև այսօր լուծե-